

«ԱՐՔԻՏՐՆԵՐԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴՊՐՈՑԻ» ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐՆ ՍՏԱՑԵԼ ԵՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐ

29.09.2019 11:17



ՀՀ փաստաբանների պալատում տեղի է ունեցել «Իրավունքի պաշտպան միավորում» ՀԿ-ի «Արբիտրների բարձրագույն դպրոցի» հնգամյա դասերն ավարտած շրջանավարտների հավաստագրերի հանձնման արարողությունը:

Հավաստագրերը հանձնել է դպրոցի տնօրեն Աննա Խաչիկյանը:

ՀՀ փաստաբանների պալատը և ՀՀ փաստաբանական դպրոցը օժանդակել են դասընթացների անցկացմանը:

ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Ջոհրաբյանը շնորհավորելով դպրոցի շրջանավարտներին ավարտելու կապակցությամբ՝ նշել է. **«Գաղափարը լավն է եղել, որովհետև մեր երկրում արբիտրաժի ինստիտուտը կայացած չէ՝ չնայած, որ կան տարբեր արբիտրաժային կազմակերպություններ, որոնք գործում են: Այս ոլորտի խնդիրների հիմնական պատճառն այն է, որ հանրությունը չի վստահում մասնավոր դատավարություններին: Փաստաբանների պալատն արբիտրաժի ինստիտուտի կայացման հարցում շահագրգռված է, քանի որ դրա կայացումը նպաստելու է նաև դատարանների բեռնաթափմանը, ինչը իր հերթին կհանգեցնի ողջամիտ ժամկետների պահպանմանը: Դրանից բացի պետք է հաշվի առնել, որ անհրաժեշտ են որակյալ արբիտրներ»:**

Շրջանավարտներին շնորհավորել է նաև Փաստաբանական դպրոցի տնօրեն Սիմոն Բաբայանը: **«Համագործակցության արդյունքում այսօր ունենք առաջին շրջանավարտները: Փաստաբանական դպրոցի և «Իրավունքի Պաշտպան Միավորում» ՀԿ-ի միջև համագործակցությունն սկսել է ուսումնական պրոցեսների փորձի փոխանցումից ինչպես նաև նյութատեխնիկական բազայի տրամադրումից: Համատեղ աշխատանքում կազմվել է ուսումնական պլաններ, ընտրվել է դասախոսական անձնակազմը»**, -նշել է Սիմոն Բաբայանը:

Շրջանավարտներին ողջունել է նաև Ազգային ժողովի պատգամավոր, դպրոցի դասախոս Արթուր Դավթյանը, ինչպես նաև դասախոսները:

```
Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" &&
parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })
```